ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2405-Ա « 11 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի Հ.4804-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարտին Մարտիրոսյանի լ/ա Մանուշակ Ավետյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի հ.4804-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և հատակագիծ թողարկելու մասին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ. Դ-35080-26 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 2-րդ փողոցի հ.41, 12-րդ փողոցի 3-րդ նրբանցքի հ.1 հասցեներում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և 1500.0քմ մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Մարտին Մարտիրոսյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ.4804-Ա որոշման մեջ «1500.0քմ» թիվը փոխարինել «1364.10քմ» թվով:

2. Սահմանել, որ Ն. Չարբախի 2-րդ փողոցի հ.41 և Ն. Չարբախի հ.285 հասցեների հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հողամասերի հատակագծերով:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և

քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246